Վերապատրաստող կազմակերպություն

<<Երևանի Լեոյի անվան N65 ավագ դպրոց>>ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ»

<<Գյումրու N 19 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ, դասվար

ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԳԹ ԱՆՆԱ ՅԱՅԼՈՅԱՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ**

_____

ԿԱՏԱՐՈՂ՝ **ԱՆԺԵԼԱ ՔՅԱՓԱՆԱԿՅՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ**

_____

ԳՅՈՒՄՐԻ 2023Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ, ԴՊՐՈՅՈՒՄ ԴՐԱՆՑ ԴԵՐԻ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....6

1.1. Բարոյագիտության և բարեկրթության հասկացությունները, առանձնահատկությունները..... 6

1.2. Բարոյագիտության և բարեկրթության կարևորությունը դպրոցում 8

ԳԼՈՒԽ 2. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՈՏԵՅՈՒՄՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ.....13

2.1. Բարոյագիտության նորմեր տարրական դասարանների ուսուցիչների համար... 13

2.2. Մանկավարժական տակտ, բարոյագիտություն և բարեկրթություն 16

ԳԼՈՒԽ 3. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՍԵՐՄԱՆՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....19

3.1. Կրտսեր դպրոցականների տարիքային էթիկական-հոգեբանական առանձնահատկությունները..... 19

3.2. Բարոյագիտության և բարեկրթության նորմերի սերմանումը կրտսեր դպրոցականների արժեհամակարգում..... 22

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....25

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 27

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական թեմայի արդիականության հիմնավորում:

Բարոյագիտությունը և բարեկրթությունը ունեն պատմական բնույթ, կրում են հասարակական զարգացման կնիքը և բովանդակությամբ փոխվում են տնտեսության և մշակույթի զարգացմանը համապատասխան: Դրանք նպաստում են անձնավորության համակողմանի և ներդաշնակ զարգացմանը՝ ապահովելով մտավոր, ֆիզիկական, աշխատանքային, բարոյական և գեղագիտական դաստիարակության միասնությունը, որն էլ իր հերթին կապված է մարդու անհատականության և ստեղծագործական ուժերի զարգացման հետ:

Բարոյագիտությունը և բարեկրթությունը հարաբերությունների, փոխներգործությունների, շփումների, դժվարությունների հաղթահարման ակտիվ կենսական գործիքներ են: Դրանք անընդհատ և համակարգված որոշումների գործընթաց են, կամային գործունեության ընտրություն ի օգուտ բարոյական նորմերի, ինքնահաղթահարման, ինքնաղեկավարման: Բարոյագիտության և բարեկրթության «արդյունքը» բարոյապես դաստիարակված, հանրության կողմից ընդունելի վարքագիծ ունեցող անհատն է: Ստացվում է, որ բարոյագիտությունը և բարեկրթությունը նյութականացվում են անհատի որակներում և հասարակական արժեքային հատկություններում՝ ի հայտ է գալիս հարաբերություններում, շփումներում և գործունեությունում: Բարոյագիտությունը և բարեկրթությունը անձնավորության համակողմանի զարգացման անհրաժեշտ կողմեր են:

Դպրոցում բարոյագիտության ու բարեկրթության կարևորությունը չի սահմանափակվում միայն ներդպրոցական միջավայրով: Դրանց կարևորությունը, մասնավորապես տարրական դպրոցում, դրսևորվում է նրանում, որ ուսուցիչը սեփական բարոյագիտական մոտեցումներով և բարեկրթությամբ «լցնում է» երեխայի արժեհամակարգը: Եվ հենց տարրական դասարանների ուսուցիչներից է կախված երեխաների հետագա վարքագիծը թե՛ դպրոցում, թե՛ դպրոցի պատերից դուրս:

Դպրոցի ներսում բարոյագիտությունն ու բարեկրթությունը պայմանավորված են առաջին հերթին ուսուցչի անձով, ապա միայն նրա կողմից՝ իր անձնային որակների փոխանցման միջոցով ձևավորվող անհատների վարքագծով: Սա է պատճառը, որ մենք

ուսումնասիրել ենք նախ ուսուցիչների բարոյագիտությունն ու բարեկրթությունը, ապա միայն տարրական դպրոցի սովորողների:

Դպրոցում բարոյագիտության և բարեկրթության նշանակությունն, ի վերջո, կայանում է նրանում, որ հետագայում, երբ սովորողներն ավարտում են դպրոցը, դառնում են հասարակության ակտիվ անդամներ, իսկ հասարակական մարդը առանց բարոյագիտության և բարեկրթության չի կարող գոյատևել հասարակական հանրության մեջ: Պետք է փաստենք, որ բարոյագիտության և բարեկրթության նորմերին հետևելն էլ ավելի է կարևորվում գիտակցության զարգացմանը զուգընթաց, քանի որ դա տանում է դեպի իմաստավորված և կատարելագործված բարոյական վարքի ձևավորման: Այս ամենում անքննելի է տարրական դասարանների ուսուցիչների դերակատարում և նրանց իսկ կողմից բարոյագիտության և բարեկրթության նորմերին հետևելու պարտադիրությունը:

Մանկավարժական գործընթացում բարոյագիտության և բարեկրթության նորմերի ապահովման, մանկավարժական գործընթացում դրանց հետևելու խնդիրների կարգավորման, այդ գործընթացի արդյունավետության բարձրացմամբ է պայմանավորված թեմայի գծով հետաքրքրությունը, ընտրությունը և այժմեականությունը:

Հետազոտության նպատակի և խնդիրների սահմանում: Հետազոտության հիմնական նպատակն է կատարել բարոյագիտության և բարեկրթության ընդհանրական ուսումնասիրություն՝ ներդպրոցական և արտադպրոցական կյանքում դրանց դերի բարձրացման համատեքստում: Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել բարոյագիտության և բարեկրթության հասկացությունները, առանձնահատկությունները,

- ներկայացնել բարոյագիտության և բարեկրթության կարևորությունը դպրոցում,

- դիտարկել բարոյագիտության նորմերը տարրական դասարանների ուսուցիչների համար,

- ուսումնասիրել տարրական դասարանների ուսուցիչների մանկավարժական տակտը և դրա շրջանակներում բարոյագիտության և բարեկրթության դրսևորումները,

- ներկայացնել կրտսեր դպրոցականների տարիքային էթիկական-հոգեբանական առանձնահատկությունները,

- ուսումնասիրել բարոյագիտության և բարեկրթության նորմերի՝ կրտսեր դպրոցականների արժեհամակարգում սերմանման գործընթացը:

Հետազոտության օբյեկտի և առարկայի սահմանում: Ընդհանուր առմամբ հետազոտության օբյեկտը իրադարձությունների դրսևորումն է բարոյագիտության և բարեկրթության կարևորության գիտակցման պայմաններում, իսկ առարկան՝ որոշակի իրադարձությունների դրսևորման դեպքում (մեր դեպքում բարոյագիտության և բարեվարքության սերմանման պարագայում) դրանց ապահոված արդյունքները:

Հետազոտության իրականացման մեթոդի (մեթոդիկայի) ընտրություն: Հետազոտության խնդիրները լուծելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու ընթացքում կիրառվել են հետևյալ գիտահետազոտական մեթոդները.

- վերլուծվել և ընդհանրացվել են բարոյագիտության, բարեկրթության փորձի վերաբերյալ աշխատությունները,
- ուսումնասիրվել են դասվարների բարոյագիտական և բարեկրթական նորմերը,
- ուսումնասիրվել է սովորողների արժեհամակարգում դասվարների կողմից բարոյագիտական և բարեկրթական նորմերի սերմանման գործընթացը:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, ընդհանուր մասից, որը բովանդակում է 3 գլուխ, որոնցից յուրաքանչյուրը բովանդակում է երկուական ենթահարց, եզրակացությունից և առաջարկությունների մասից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 29 համակարգչային էջ (ներառյալ տիտղոսաթերթը, բովանդակությունը, գրականության ցանկը):

ԳԼՈՒԽ 1. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ, ԴՊՐՈՑՈՒՄ ԴՐԱՆՑ ԴԵՐԻ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Բարոյագիտության և բարեկրթության հասկացությունները, առանձնահատկությունները

Բարոյագիտությունը կամ էթիկան փիլիսոփայության բաժին է, որի ուսումնասիրման առարկան են բարոյականություն ու բարոյախոսությունը: Moralis տերմինը շրջանառության մեջ է դրել Ցիցերոնը (լատ. moralis – ընդունված ավանդույթներ, չգրված օրենքներ):

«Էթիկա» տերմինը ներմուծել է Արիստոտելը: Նա դրա տակ նկատի է ունեցել հատուկ գիտություն, որն ուղղված է բարոյական առաքինությունների ուսումնասիրմանը: Սկզբնապես էթիկան գոյություն է ունեցել որպես «պրակտիկ փիլիսոփայություն», որը կոչված է՝ մարդուն տալ պրակտիկ բարոյական ուղեցույցներ, սովորեցնել առաքինի արարքներին[1]:

Էթիկայում, ինչպես և այլ գիտություններում, կարելի է առանձնացնել 2 մակարդակ՝ էմպիրիկ և տեսական: Էմպիրիկ էթիկայի պրոբլեմատիկան կապված է այնպիսի հարցերի հետ, ինչպիսիքն են՝

1. բարոյական բնույթի ավանդույթների և սովորույթների պատմական փոփոխությունները,
2. մարդու և հասարակության զարգացման մեջ բարոյական հարաբերությունների դերը,
3. երեխաների բարոյական դաստիարակության նպատակները և միջոցները և այլն[2]:

Տեսական էթիկայի հետաքրքրությունների կենտրոնում է այն հարցը, թե որ դրդապատճառները, մտադրությունները, դիրքորոշումներն են մարդու վարքը դարձնում բարոյական: Գոյություն է ունեցել կարծիք, որ դրդապատճառը կարելի է համարել բարոյական, եթե այն կրում է բնական բնույթ, արտահայտում է մարդուն նախապես

բնորոշ բարյացակամությունը: Սակայն բնական բարյացակամության հետ մեկտեղ մարդուն բնորոշ է նաև նույն բնական դաժանությունը:

Բարոյական նորմերը, ընդհանուր առմամբ, ներշնչվում են մարդկանց: Բարոյական նորմի խախտման դեպքում դու ավելի շատ պատասխանատու ես ինքդ քո առջև:

Բարոյականություն և բարոյախոսություն հասկացությունները հիմնականում օգտագործվում են որպես հոմանիշներ: Բնության «արարքները» մենք չենք կարող գնահատել բարոյական դիրքերից: Ոչ մի երկրաշարժ չի կարելի համարել անբարոյական, քանի որ այն չի կրում պատասխանատվություն իր կատարած գործողությունների համար, հետևաբար չի ենթարկվում էթիկական գնահատման ու բնութագրման:

Արարքին տալով էթիկական գնահատական, նրան որակելով որպես բարոյական կամ անբարոյական, մենք ընդունում ենք, որ դա իրականացրած անձը ի վիճակի է կրել պատասխանատվություն դրա համար:

Բարոյագիտության կարևորագույն հարցերից է այն, թե արդյո՞ք կան ընդհանուր բարոյական սկզբունքներ: Այս հարցին ի պատասխան՝ առաջ են եկել **գեներալիզմն** ու **պարտիկուլյարիզմը**: Այս տերմինները ծագել են անգլերեն «general»՝ ընդհանուր, և «particular»՝ մասնավոր, եզակի բառերից[3]:

Գեներալիստները գտնում են, որ կան քիչ թե շատ ընդհանուր բարոյական նորմեր. կան ընդհանուր կանոններ, որոնց համապատասխան մարդիկ պետք է վարվեն: Այդպիսի ընդհանուր կանոն կարող են լինել քրիստոնեական պատվիրանները՝ «մի՛ սպանիր», «մի՛ գողացիր» և այլն: Այդպիսի կանոնները կարող են լինել նաև շատ ավելի վերացական՝ «Միշտ վարվիր՝ հետևելով այնպիսի սկզբունքի, ինչպիսի սկզբունքի, որ կցանկանաս հետևեն բոլորը», կամ «Միշտ վարվիր այնպես, որ առավելագույն թվով մարդիկ զգան առավելագույն չափով հաճույք» և այլն[4]:

Կարևոր է նկատել, որ գեներալիզմը և աբսոլյուտիզմը նույնը չեն: Ըստ գեներալիզմի, կան ընդհանուր բարոյական սկզբունքներ, սակայն այդ սկզբունքները կարող են կախված լինել կրոնից, մշակույթից և այլն: Աբսոլյուտիզմի համար կարևորն այն է, որ կան այնպիսի բարոյագիտական դրույթներ (սկզբունքներ կամ կոնկրետ գործողության գնահատականներ), որոնք ճշմարիտ են՝ անկախ կրոնից, մշակույթից, գործող անձից կամ

իրավիճակից: *Պարտիկուլյարիստները* գտնում են, որ ընդհանրապես չեն կարող լինել քիչ թե շատ ընդհանուր բարոյական սկզբունքներ՝ գործող անձն ամեն մի կոնկրետ իրավիճակում յուրօրինակ որոշում է կայացնում՝ գործի դնելով իր ստեղծագործականությունն ու բանականությունը: Այս տեսակետի կողմնակից էր, օրինակ, Արիստոտելը: Պարտիկուլյարիստները մերժում են բարոյական սկզբունքների գոյությունը: Ըստ նրանց՝ չկան ո՛չ համամարդկային և ո՛չ էլ ներցեղային բարոյական նորմեր: Բարոյական ամեն մի քայլ եզակի է, ամեն մի քայլ ենթադրում է առանձին որոշում: Կարևոր է ընդգծել, որ պարտիկուլյարիզմը և ռելյատիվիզմը տարբեր են: Ըստ ռելյատիվիզմի, ամեն մի գործողության բարոյական լինել–չլինելը կախված է որոշակի կրոնական, մշակութային և այլ համատեքստից: Պարտիկուլյարիստները պարզապես մերժում են ընդհանուր սկզբունքների գոյությունը: Ըստ Արիստոտելի՝ չկան ընդհանուր սկզբունքներ, սակայն ամեն մի կոնկրետ իրավիճակում առաքինի մարդը միշտ կկատարի այնպիսի գործողություն, որը բարոյագիտական տեսակետից միանգամայն, բացարձակապես ճիշտ գործողություն է[5]:

Այսպիսով, ամփոփելով ենթահարցն՝ ընդգծենք, որ բարոյական ընտրությունը միշտ կատարվում է գիտակցաբար, ինքնակամ, համաձայն անձի ներքին համոզմունքների և այդ իսկ պատճառով՝ անհամատեղելի է գործածի համար անձնական պատասխանատվությունից փախչելու, հանգամանքներով արդարանալու, որևէ հեղինակության հղումներ անելու փորձերի հետ: Պատասխանատվություն կրելը՝ կատարած արարքների հետևանքներն ինքն իր վրա վերցնելն է, և. բառի լայն իմաստով, դրանց համար վարձահատույց լինելը:

1.2. Բարոյագիտության և բարեկրթության կարևորությունը դպրոցում

Ինչպես արդեն նշեցինք մեր աշխատանքի ներածական մասում, դպրոցում բարոյագիտության և բարեկրթության կարևորությունը անհրաժեշտ է դիտարկել ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների դիտանկյունից: Ուսուցիչները, կրելով բարոյագիտական և բարեկրթական կայուն նորմեր, դրանք փոխանցում են աշակերտներին՝ դնելով հասարակական անձի ձևավորման հենքը:

Դպրոցում բարոյագիտության և բարեկրթության կարևորությունը դրսևորվում է ինչպես ներդպրոցական, այնպես էլ արտադպրոցական հարաբերություններում սովորողների վարվելակարգի, բարոյագիտական նորմերի գիտակցման և կիրառման մեջ: Բարոյագիտությունը և բարեկրթությունը դպրոցում իրենցից ներկայացնում են՝

- բոլոր գործընթացների միագումար, որոնց հետևանքով մարդու մոտ զարգանում են ընդունակություններ, հարաբերություններ և վարքի այլ ձևեր, որոնք աժեքավոր են այն հասարակության համար, որտեղ ապրում է նա,

- սոցիալական գործընթաց, որի օգնությամբ մարդիկ ենթարկվում են շրջապատի կողմից առանձնացված և վերահսկվող հաստատության (այս դեպքում դպրոցի) ազդեցությանը, որպեսզի կարողանան հասնել սոցիալական իրազեկվածության և անհատական հատկանիշների լավագույնս զարգացման:

Դպրոցում բարոյագիտական և բարեկրթական մոտեցումների ներդրման արդյունքում ուսուցիչները հասնում են բարոյական դաստիարակության ապահովման: Բարոյափիլիսոփայական և մանկավարժահոգեբանական գրականության վերլուծության հիման վրա կարելի է առանձնացնել է բարոյական դաստիարակության էության վերաբերյալ տարբեր մոտեցումներ՝ իմացական, հուզական գնահատողական, աշխարհայացքային, վարվեցողական-գործունեական, արժեքային: Բարոյական դաստիարակության նկատմամբ.

• Իմացական (ճանաչողական) մոտեցումը, մարդկանց փոխհարաբերությունները կարգավորող, բարոյական նորմերի վերաբերյալ համոզմունքների և ինքնուրույնության ձևավորման գործընթաց է: Այն բարոյական այնպիսի արժեքների բովանդակային բնութագիրը տալու և վերլուծելու կարողության ձևավորումն է, որը դրսևորվում է վարքագծում:

• Հուզական-գնահատողական մոտեցումը գնահատողական դատողությունների, բարոյական արժեքների, մարդկային փոխհարաբերությունների, կայունության, բարոյական զգացումների ձևավորման գործընթաց է:

• Աշխարհայացքային մոտեցումը բնության, հասարակության, մարդկանց մասին ամբողջական պատկերացումների ձևավորման գործընթաց է, որն արտահայտվում է հասարակության և անձի բարոյական իդեալների ու արժեքային համակարգերում:

• Վարվեցողական-գործունեական մոտեցումը դիտարկում է բարոյական վարքագծում՝ հաստատուն կերպով գիտակցված ունակությունների, կարողությունների, հմտությունների, սովորությունների ձևավորման գործընթաց է, որը անձի կենսագործունեության ընթացքում դրսևորվում է բարոյական ինքնորոշմամբ և ինքնակառավարմամբ:

• Ամբողջական մոտեցումը երեխայի անձի ամբողջական բարոյական զարգացման ձևավորման գործընթացն է:[6]

Ընդհանրացնելով փաստենք, որ բարոյագիտությունը և բարեկրթությունը բարոյական դաստիարակության հենքն են դպրոցում: Դպրոցականների բարոյական դաստիարակությունը՝ բարոյական արժեքների հիման վրա կառուցված բազմաբնույթ գործունեության ընթացքում, ուսուցչի և աշակերտի նպատակաուղղված փոխներգործությունն է՝ անձի բարոյական հատկանիշների ձևավորման նպատակով:

Երեխաների հասարակական վարքի և փոխհարաբերությունների փորձը բարոյական լուսավորություն հետ մեկտեղ իր հերթին անհրաժեշտ հիմք է դառնում բարոյական գիտակցության ձևավորման համար: Բարոյական լուսավորությունը կատարում է մի քանի դաստիարակչական ֆունկցիա, այն պատկերացում է տալիս մարդկային կյանքի ու մշակույթի բարոյական արժույթների մասին՝

- ներգործում է բարոյական պատկերացումների, հասկացությունների, հայացքների, դատողությունների, գնահատականների ձևավորման և դրա հիման վրա բարոյական համոզմունքների ձևավորման վրա:
- Նպաստում է դպրոցականների սեփական, բարոյական փորձի իմաստավորմանը և հարստացմանը:
- Ճշտում է բարոյական բնագավառի գիտելիքները, որոնք ձեռք են բերվել տաբեր աղբյուրներից:
- Նպաստում է անձի բարոյականության ինքնադաստիարակությանը:

Գիտակցելով բարոյական պահանջները, սեփական բարոյական իդեալներ ձևավորելով և դրանք վարքի դրդապաճառներ դարձնելով երեխաները նվաճված այս դիրքերից սկսում են վերահիմաստավորել և ընդհանրացնել իրենց փորձը: Բարոյական

[6] Շաղինյան Լ. «Բարոյական դաստիարակություն» հասկացության վերլուծությունը դաստիարակության արդի հայեցակարգերի համատեքստում: Երևան, ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, 2008 / 1 – 2, էջ 82-83:

վարքագծի ձևավորման գործում Ռուսոն մեծ տեղ էր տալիս օրինակներին. «Ձեր բոլոր դասերը տվեք օրինակներով և վստահ եղեք արդյունքին»[7]:

Հասարակարգում կատարված արմատական փոփոխությունները պահանջում են վերաիմաստավորել բարոյական գաղափարները, պահպանել նախորդ ժամանակում ստեղծված բարոյական արժեքները: Բարոյական դաստիարակության համար էական վտանգ է ներկայացնում այն ջանքերը, որ առանց միջոցների ընտրության ուղղված են հարստության, փողի, կարիերիզմի, անհատապաշտության, անձնական հաջողության տենչի բավարարմանը: Ուսուցչի համար լուրջ դժվարություն է ստեղծում մոտեցումների այն բևեռացումը, որ կա դպրոցական բարոյականության մոդելի և իրական կյանքի դասերի միջև: Մարդու հոգեբանական էությունը լիարժեք չի լինի , եթե նա չի տիրապետում բարոյական կուլտուրայի հիմք հանդիսացող գիտելիքներին: Շատ վաղ պետք է իմաստավորել լավն ու վատը, բարին ու չարը, գեղեցիկն ու տգեղը գործողություններում, կարողանալ զգալ ոչ միայն սեփական կյանքի զարկերակը, այլև հարազատների, շրջապատի, սեփական ժողովրդի ու համայն մարդկության: Բարոյական կուլտուրայի այբբուբենը մտնում է գիտակցության և հոգու մեջ, եթե երեխան ապրում է մարդկային փոխհարաբերությունների բարոյական կուլտուրայի մթնոլորտում: Մինչև այդ պայմաններն են ձևավորվում այնպիսի բարձր բարոյական հատկանիշներ, ինչպիսիք են պարտքն ու պատասխանատվությունը, սերն ու խիղճն ամենալայն ընդգրկումով:

Բարոյագիտական և բարեկրթական նորմերի ներգրավումը դպրոցական գործընթացում կատարվում է ըստ տարիքային հնարավորությունների: Պետք է իմանալ, թե կրտսեր, դեռահասության, պատանեկության կոնկրետ տարիքներում բարոյական ինչ որակներ, նորմեր ներարկել նրանց մեջ:

Մեր թիրախային խումբը կրտսեր դպրոցական տարիքի երեխաներն են: Այդ տարիքում դրվում է բարոյական վարքի հիմքը, յուրացվում են բարոյական նորմաների և վարքի կանոնները: Կրտսեր դպրոցականների բարոյական գիտակցությունը էական փոփոխությունների է ենթարկվում առաջինից մինչև չորրորդ դասարաններում: Բարոյական գիտելիքները, պատկերացումները և դատողությունները նկատելիորեն հաստատուն են, դառնում են ավելի գիտակցված, բազմակողմանի, ընդհանրացված: Եթե 1-2-րդ դասարանների աշակերտների բարոյական դատողությունները հենված են

[7] Стреха Е.А. Ж.-Ж. Руссо о роли природы в воспитании детей/ Е.А. Стреха// Начальная школа. - 2008. - № 5. - С. 20-22.

սեփական վարքի վրա և ուսուցչի ու ծնողների կոնկրետ ցուցումների ու պարզաբանումների վրա, ապա 3-4-րդ դասարանների աշակերտները, բացի իրենց վարքի փորձից և մեծերի ցուցումներից փորձում են վերլուծել ուրիշ մարդկանց փորձը:

Կրտսեր տարիքում բարոյական զարգացման հիմքն երեխաների մեջ հումանիստական հարաբերությունների ու փոխհարաբերությունների ձևավորումն է: Հենց այդ տարիքում է, որ երեխան պետք է ըմբռնի, որ ինքը չի կարող ապրել միայնակ, հասարակությունից, մարդկանցից կտրված[8]:

Դպրոցում բարոյագիտության և բարեկրթության նորմերի ամրակայումն ուսուցչի կողմից անհնարին կլիներ այն դեպքում, երբ վերջինս չհետևեր բարեվարքության հիմնարար նորմերին: Դպրոցում աշխատող յուրաքանչյուր ուսուցիչ, իսկ դասվարներն առանձնապես, պետք է հետևեն բարեվարքության հեևյալ կանոններին՝

- ապավինեն ճշմարտությանը և նվիրված լինեն իրենց գործին,
- ազատ լինեն իրենց գործողություններում,
- լինեն ինքնորոշված և պատասխանատու,
- լինեն ազնիվ և խուսափեն ցանկացած տեսակի խաբեությունից,
- փոխադարձ հարգանքի միջավայրում կազմակերպեբ համագործակցությունը բոլոր օղակների հետ,
- լինեն հավասարության ապահովման ջատագով և խուսափեն ցանկացած տեսակի խտրականության դրսևորումից

Այս ամենի հիմքով կարող ենք ասել, որ դպրոցում առանձնակի կարևորություն ունի նաև վարվելակարգը, որը հետագա հասարակական անձի կարևորագույն հատկանիշներից է: Վարվելակարգը բարոյագիտության և բարեկրթության արդյունք է, դրանց հետ սերտ փոխկապվածության մեջ գտնվող հասկացություն է: Վարվելակարգը, էթիկետը վարքի հաստատված կարգ է, վարքի կանոնների համախմբություն, որոնք վերաբերում են մարդկանց նկատմամբ հարաբերության, վերաբերմունքի, պահվածքի արտաքին դրսևորմանը (վարվեցողությունը շրջապատի նկատմամբ, վարքը հասարակական վայրերում, շարժուձևերը, հագուստը և այլն): Այս կերպ հասկացված վարվելակարգը հասարակության արտաքին կուլտուրայի (վարքի կուլտուրայի) բաղկացուցիչ մասն է, որով, հասկանալի է, չի սպառվում վերջինիս բովանդակությունը:

Վարքի կուլտուրայի ու վարվելակարգի միջև գոյություն ունի մասի և ամբողջի բարդ փոխհարաբերություն: Վարվելակարգն անմիջական կապ ունի նաև հասարակության բարոյական կուլտուրայի, բարոյականության հետ և մտնում է, լայն իմաստով հասկացված, բարոյականության բովանդակության մեջ՝ դառնալով նրա բաղկացուցիչ տարրերից մեկը:

Որոշ հեղինակներ գտնում են, որ վարվելակարգը և բարոյականությունը իրար հատվող երկու շրջաններ են. ինչ-որ բանում համընկնում են, ինչ-որ բանում՝ ոչ: Նրանք գտնում են, որ վարվելակարգը կարգավորում է միայն մարդու արտաքին վարքը՝ չթափանցելով մարդկային արարքների խորքը: Բարոյականության համար դա անընդունելի է այնքանով, որքանով բարոյական գնահատման համար կարևոր է իմանալ այս կամ այն արարքի դրդապատճառները, պայմանները, որոնցում այն կատարվել է: Բարոյականությունը բարձրանում է մինչև բարձրագույն արժեքները, այլ ոչ թե բավարարվում միայն քաղաքավարության կանոններով:

ԳԼՈՒԽ 2. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2.1. Բարոյագիտության նորմեր տարրական դասարանների ուսուցիչների համար

Տարրական դասարաններում ուսումնական գործունեության արդյունավետության բարձրացումն էականորեն կախված է դասվարի անձնային բնութագրիչներից, նրա էթիկայից: Դասվարի համար բարոյագիտության նորմերի սահմանումը հետապնդում է երկու նպատակ: Առաջին հերթին ուսուցիչը գիտակցում է, որ կան հստակ կանոններ, որոնց կենսագործման միջոցով նա կարող է հասնել իր առաքելության ապահովմանը: Երկրորդ, այդ նորմերի ամրագրմամբ բարձրանում է ուսուցչի դերը հանրության շրջանում:

Դասվարի մասնագիտական բարոյագիտական նորմերի հիմքում երեխայի իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքի դրսևորման, մարդասիրության, հոգատարության, օրինապահության, պատասխանատվության,

ժողովրդավարության, համագործակցության, համերաշխության, արդարության, անաչառության, արհեստավարժության սկզբունքներն են:

Ուսուցիչն աշակերտների հետ իր հարաբերությունները պետք է կառուցի փոխադարձ հարգանքի հիման վրա: Նա պետք է հարգի աշակերտների անհատականությունը՝ անկախ նրանց տարիքային, սեռային, անձնային առանձնահատկություններից, դավանանքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծնողների ունեցվածքի, հասարակական դիրքի կամ որևէ այլ կարգավիճակի հետ կապված հանգամանքից:

Ուսուցիչն պետք է անաչառ ու բարյացակամ լինի բոլոր աշակերտների նկատմամբ, հետևողա կան է նրանց կրթական պահանջների բավարարման գործում, պատրաստակամությամբ արձագանքի այդ առնչությամբ ծագած բոլոր խնդիրներին:

Ուսուցիչը պետք է նպաստի սովորողների մեջ դրական անձնային հատկանիշների և միջանձնային որակների զարգացմանը, այդ թվում՝ ինքնուրույնություն, ինքնավերահսկում, ինքնակրթություն, համագործակցելու և ուրիշներին օգնելու պատրաստակամություն և այլն:

Ուսուցիչը պետք է հարգի իր սովորողների մտքի, խղճի և դավանանքի ազատությունը, պատշաճ ուշադրություն դարձնի նրանց արտահայտած կարծիքներին ու հայացքներին և նրանց չպարտադրի իր սեփական հայացքները:

Ուսուցիչը պետք է պահանջկոտ և հետևողական լինի բոլոր սովորողների նկատմամբ, ընդ որում՝ այդ պահանջկոտությունը պետք է հիմնավորված լինի և ունենա դրական ուղղվածություն:

Ուսուցիչը պարտավոր է գաղտնի պահել սովորողի մասնավոր կյանքի անձեռնմխելիությանն առնչվող տեղեկությունը, ինչպես նաև նրա կողմից իրեն վստահված գաղտնիքը՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Սովորողի անձին վերաբերող տեղեկությունը ուսուցիչը կարող է օգտագործել բացառապես ի շահ սովորողի:

Ուսուցիչը պետք է անաչառ լինի իր գնահատականների մե ջ, դրանք պետք է հիմնավորված լինեն և անկողմնակալ: Սովորողների նվաճումները գնահատելիս ուսուցիչը պարտավոր է ձգտել օբյեկտիվության և արդարության:

Նա չի կարող բարձրացնել կամ իջեցնել սովորողների գնահատականները սեփական հայեցողությամբ, առաջադիմությունը արհեստականորեն բարձրացնելու նպատակով նրանց փոխարեն ուղղել թույլ տրված սխալները կամ քողարկել դրանք: Ուսուցիչը պետք է մեկնաբանի իր նշանակած գնահատականները, իսկ սխալ գնահատում հայտնաբերելու դեպքում՝ անմիջապես ուղղի գնահատականը:

Բարոյագիտական և բարեկրթական նորմերի ներդրումը կարևոր է նաև ուսուցիչների և մանկավարժական կոլեկտիվի հետ հարաբերություններում: Ուսուցիչները պետք է ձգտեն միմյանց հետ ակտիվ համագործակցության, փոխադարձաբար հարգում և օգնում են իրար, կարևորում են միմյանց և ուսումնական հաստատության շահը: Ուսուցիչներին պետք է միավորի փոխադարձ վստահությունը, թիմային համերաշխությունը, միմյանց աջակցելու ազնիվ մղումն ու պատրաստակամությունը: Այս ամենը տեսնելով աշակերտների մոտ ևս ձևավորվում են միջանձնային հարաբերությունների վերաբերյալ դրական պատկերացումներ:

Դպրոցում բարոյագիտական և բարեկրթական նորմերի ներդրումը ենթադրում է նաև ուսուցչի՝ ծնողական համայնքի և պետության, հասարակության հետ հարգալից, բարեկամական, ակտիվ հարաբերությունների առկայություն:

Դասվարի բարեկրթությունը դրսևորվում է նրա նրբանկատության մեջ, որը հակադրվում է կոպտությանը և աննրբանկատությանը: Դասվարին բնութագրական է նաև խստությունը, որը, սակայն, չպետք է խանգարի լինել բարի և գործել անաչառ[9]:

Դասվարի հանդեպ սովորողների հարգանքը ձևավորվում է այն ժամանակ, երբ դասվարը հարգում է մյուսների արժանապատվությունը: Նախքան ուրիշներից ուշադրություն պահանջելը, դասղեկն ինքը պետք է ուշադիր լինի իրեն շրջապատողների հանդեպ, հասկանա նրանց շահերը, կարիքներն ու պահանջները: Սովորողների հետ հաղորդակցման ընթացքում ուսուցիչը պետք է շարունակի մնալ բարի, սակայն երբեք չպետք է մի կողմ թողնի պահանջկոտությունը, ինչն էլ երեխաների համար ամենակարևորն է և ստեղծում է դասվարի հեղինակությունը:

2.2. Մանկավարժական տակտ, բարոյագիտություն և բարեկրթություն

Ընդհանուր առմամբ տակտը մարդկային բնավորության գիծ է, շրջապատի մարդկանց նկատմամբ ճիշտ վերաբերմունք դրսևորելու կարողություն: Տակտի զգացողությունը թույլ է տալիս ըստ իրադրության ճիշտ կողմնորոշվել, խորանալ այն հանգամանքների մեջ, որոնք կանխորոշում են իրադրության ելքը[10]: Մանկավարժական տակտը, բացի այն, որ ենթադրում է արդարացի և ճիշտ վերաբերմունք սովորողի նկատմամբ, նաև բովանդակում է պահանջկոտության, վստահության, երեխայի հանդեպ հարգանքի պահանջները:

Համարվում է, որ ուսուցիչն ունի մանկավարժական տակտ այն դեպքում, երբ նա սովորողի հանդեպ դրսևորում է բարձր բարոյական, օբյեկտիվ և արդարացի վերաբերմունք: Դրա հիմքում գիտական, մասնագիտական պատրաստականությունն է, երեխաներին ճանաչելու ունակությունը[11]:

Մանկավարժը իր անձնային որակներով կարողանում է `

• ուղղորդել, ուղեկցել, հեշտացնել երեխայի անձի կայացման գործընթացը, ընդունակ է օգնելու երեխային սեփական պահանջմունքներն իմանալու, բացելու, փորձելու, նրա հետաքրքրությունները բավարարելու, ճանապարհին հանդիպած խոչընդոտները հաղթահարելու գործում[12],

• մանկավարժն ընդունակ է մանկավարժական կոնկրետ իրավիճակներ լուծելու համար ընտրել դաստիարակության համապատասխան մեթոդներ և միջոցներ, և նրան տրված է ընտրության այդ իրավունքը,

• մանկավարժը կարողանում է իր առջև դրված խնդիրները հասցնել աշակերտի գիտակցությանը և դրանք դարձնել նրա սեփական խնդիրները, մանկավարժը գիտակցում է, որ մասնագետին ձևավորում է ոչ թե միայն ինտելեկտի մակարդակը (ինչպես առաջ էր ընդունված), այլ հաղորդակցական կարողությունների համալիրը, հատկապես՝ հուզական զարգացման մակարդակը, համագործակցության պատրաստ լինելը և նույնիսկ հումորի զգացումը:

Հմուտ մանկավարժը հավատում է երեխայի ուժերին և օգնում է դժվար իրավիճակներում լուծումներ գտնելու՝ հաղթահարելով խոչընդոտները: Կարևորվում է նաև տեղեկատվություն հաղորդողի դերը, քանի որ ուսուցչի օգնությամբ երեխան ստանում է տեղեկատվություն արժեքների, նորմերի, կանոնների վերաբերյալ: Հանրակրթական դպրոցների ավագ դասարանների աշակերտների մոտ անցկացված հարցադրումների արդյունքները ցույց են տալիս, որ աշակերտները կարևորում են ուսուցչի դերը որպես ընկեր: Այսինքն, մի անձնավորություն, որը հարգում է իրենց և աշխատում չվիրավորել և չստեղծել կոնֆլիկտային իրավիճակներ:

Աշակերտները կարևորում են ուսուցչի համբերատարությունը, արդարացիությունը, բարյացակամությունը: Նշվում է նաև պահանջկոտությունը, այնուամենայնիվ, աշակերտները չեն ընդունում բռնակալի դերը, երբ ուսուցիչը միայն պարտադրում է որոշակի նորմերի կատարումը:

Ժամանակակից ուսուցչի որակավորումը և նրա աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու գլխավոր նախապայման է նրա հոգեբանական գրագիտության աճը, տարիքային և ընդհանուր մանկավարժական հոգեբանության գծով գիտելիքների խորացումը: Առանց աշակերտներին «վնաս» պատճառելու, հնարավոր չէ նրանց ուսուցանել: Չիմանալով տվյալ տարիքի հոգեբանական առանձնահատկությունները, չկարողանալով ճիշտ գնահատել աշակերտի անհատական-հոգեբանական որակները՝ ուսուցիչը չի կարող ճիշտ ընտրել մանկավարժական ներգործության միջոցներ և, բնականաբար,չի կարող իմանալ, թե ինչ է ստեղծում[13]:

Միայն ուսուցչի հոգեբանական լուրջ պատրաստությունը հնարավորություն կընձեռնի նրան ժամանակակից բազմապիսի մեթոդներից և մեթոդական հնարներից ու միջոցներից ընտրել այն, ինչ անհրաժեշտ է կոնկրետ մանկավարժական խնդիրների լուծման համար: Առանց ուսուցչի հոգեբանական հեռատեսության հնարավոր չէ կանխագծել աշակերտների վարքը, իսկ առանց վարքի կանխագծման հնարավոր չէ նրանց անձնավորության նպատակասլաց ու կազմակերպված ձևավորումը: Գաղտնիք չէ, որ դպրոցում(և ոչ միայն մեր դպրոցում) դեռևս նշանակալից է աշակերտների անառաջադիմության տոկոսը: Անառաջադիմությունը հաճախ կապված է սովորել չցանկանալու, անկարգապահության, առանձին առարկաների, ուսուցչի կամ ամբողջ

դպրոցի պահանջների նկատմամբ աշակերտի անլուրջ վերաբերմունքի հետ: Դրանում մեղքի իրենց բաժինն ունեն և՛ ծնողները, և՛ փողոցը, և՛ այն ուսուցիչները, որոնք չեն մտածում իրենց գործողությունների հոգեբանական նպատակասլացության մասին և հաճախ աշակերտներին պատճառում են դժվար ուղղելի հոգեկան ցնցում[14]:

Օրինակ, խիստ նկատողությունները, ծաղրական կամ կոպիտ դիտողությունները, անձը վիրավորող արտահայտությունները, որոնք արվում են աշակերտին նրա հասակակիցների ներկայությամբ, հիվանդագին է ընդունվում, վիրավորում է նրա ինքնասիրությունը և արժանապատվության զգացումը: Երեխայի անձի հրապարակայնորեն ստորացումը նրա հոգում ծնում է սուր կոնֆլիկտ, ներքին բողոքի պոռթկում, երկար ժամանակ չմոռացվող վիրավորանք: Եվ շատ հնարավոր է, որ դա կարող է հետագայում մեծերի պահանջների նկատմամբ առհամարական վերաբերմունքի, ուսուցչի, առարկայի, և առհասարակ, դպրոցի նկատմամբ ատելության զգացումի պատճառ դառնալ:

Դասվարի և աշակերտների միջև սերտ փոխհարաբերության պարտադիր պայմանը մանկավարժական տակտի առկայությունն է, որը մեծ մանկավարժ Ուշինսկին համարում է հոգեբանական տակտ: Այսինքն՝

ա.դասվարի վերաբերմունքի մեջ պետք է լինի բնականություն և պարզություն առանց անպատշաճ մոտիկության

բ. վստահություն առանց վարքագծի նորմերի չարաշահման

գ. տոնի լրջություն առանց ավելորդ լարվածության

դ. պահանջկոտություն առանց որևէ բծախնդրության

ե. բարի կամեցողություն առանց փաղաքշանքի

զ. իրոնիա և հումոր առանց զավեշտության[15]:

Դասվարի և աշակերտների միջև հոգեբանական մերձեցման ձևավորմանը նպաստող գործոններից է նաև դասվարի մտահոգությունը համադասարանցիների միջև բարեկամական հարաբերությունների զարգացման մասին, դասարանում այնպիսի մթնոլորտի ստեղծման մասին, որի առկայությամբ յուրաքանչյուր աշակերտ իրեն հավասար զգա հավասարների մեջ: Հակառակ դեպքում՝ մշտապես խարազանելով

այսինչ աշակերտին և նրանց համար օրինակ դարձնելով ուրիշներին՝ ուսուցիչը դրանով ամրապնդում է անիրավահավասար հարաբերություններ:

Դասվարը պետք է ձգտի կոլեկտիվում դաստիարակել ճիշտ փոխհարաբերություններ, չընդգծի ոմանց հաջողությունները, ոմանց անհաջողությունները, չվիրավորի երեխային ամբողջ դասարանի առջև, հաճախ աշակերտների հետ անհատական զրույցներ ունենալ, նկատել թույլերի նույնիսկ ամենափոքր հաջողությունները, բայց սուր կերպով չընդգծել դրանք որպես անսպասելի բաներ: Ուսուցիչը պետք է աշակերտի մոտ դաստիարակի այն բանի գիտակցումը, որ լավ սովորելու ընդունակությունը անձնավորության բազմաթիվ հատկություններից մեկն է, հաճախակի զրուցի «անհետաքրքիր» կամ բարդույթավորված երեխաների հետ, որպեսզի ուրիշներն էլ հետաքրքրվեն նրանցով, մի խոսքով, յուրաքանչյուր երեխայի մեջ փնտրել և գտնել բարի դրական գծեր:

ԳԼՈՒԽ 3. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՍԵՐՄԱՆՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

3.1. Կրտսեր դպրոցականների տարիքային էթիկական-հոգեբանական առանձնահատկությունները

Յուրաքանչյուր մանկավարժ իր գործունեության ընթացքում հանդիպում է աշակերտների տարիքային զարգացման օրինաչափությունների ճանաչման և դրանցով առաջնորդման խնդրին, ինչը կարող է նպաստել ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում պատասխանատու լինել, տարբեր պահանջմունքներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ

մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ինքն ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջմունքներ [16]: Մի կողմից, երեխան անհանգիստ է, իսկ մյուս կողմից, քանի որ նրա մոտ արդեն ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է գործել, առաջնորդվելով որոշակի նպատակներով, արժեքներով, զգացմունքներով: Կրտսեր դպրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ:

Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է խաղալու պահանջմունքը: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային տարրերի առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև շարժման մեջ գտնվելու պահանջմունքը, հետևաբար, մանկավարժը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրանանալու կարողությանը: Մանկավարժը նաև կարող է հմտորեն կազմակերպել երեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է և կարողանում արդյունավետ շարունակել ուսումը:

Ողջ համակարգում կարևոր դեր են խաղում սոցիալական դրդապատճառների ձևավորումը, որը ի հայտ է գալիս 2-3 դասարաններում: Աշակերտի համար կարևորվում են մանկավարժի գովասանքը, գնահատականը, ավելի ուշ հասակակիցների կարծիքը իր անձի վերաբերյալ: Այս ամենը նպաստում է երեխայի կողմից սոցիալական իր նոր դերերի գիտակցմանը, իր Ես-ի ինքնահաստատմանը: Երեխայի դրդապատճառների առաջացման, հետաքրքրության պահպանման, Ես-ի ինքնահաստատման գործընթացում չափազանց կարևորվում է մանկավարժի դերը[17]:

Կրտսեր դպրոցականի մոտ առաջնային են նաև բարոյական դրդապատճառների ձևավորումը, ինչում կարևոր դեր են խաղում իդեալների ձևավորումը, որոնք կրում են

շատ հստակ բնույթ /հիմնականում տարբեր գրքային կամ հեռուստատեսային հերոսներ/, փոփոխական են և ազդում են իրենց արտաքին կողմերով:

Կրտսեր դպրոցի առաջին տարիներին մանկավարժը երեխայի համար միակ և անկոտրում հեղինակությունն է: Աշակերտի շփումը հիմնականում ուղղված է նրան, համադասարանցիներին նա ընդունում է մանկավարժի միջոցով, արժևորում է այն համադասարանցիներին, ում գնահատում է մանկավարժը: Այդ պատճառով, մանկավարժը որպես հեղինակություն կարող է ուղղորդել երեխայի հասարակական շփումները: Հետզհետե մեծանում է հասակակիցների հետ շփվելու պահանջմունքը, որի բավարարման ընթացքում երեխան սկսում է հասկանալ առկա կանոնները, միջանձնային շփման նրբությունները[18]:

Կրտսեր դպրոցական տարիքում ինտենսիվ զարգանում և հարստանում է երեխայի խոսքը: Մանկավարժը կարող է օժանդակել այս գործընթացին՝ ապահովելով հարուստ խոսքային միջավայր /գրքերի ընթերցում, ֆիլմերի դիտում, խոսքի ունկնդրում/, ստեղծելով դասաժամերին արտահայտվելու և շփվելու հնարավորություններ, ձևավորելով բավարար բառապաշար, ձևավորելով գեղեցիկ խոսք կիրառելու պահանջմունք և այլ: Այս տարիքում նաև ձևավորվում է գրավոր խոսքը, որը բավականաչափ ծանր, երկարատև և կամային ճիգեր պահանջող գործունեություն է[19]: Սա շատ կարևոր է բարոյագիտական և բարեկրթական նորմերի՝ երեխայի խոսքում դրսևորվելու առումով:

Այսպիսով, կարելի է փաստել, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխաները ունենում են հետևյալ ձեռքբերումները՝

- ճանաչողական ոլորտի զարգացում
- հուզական-պահանջմունքային նոր մակարդակի ձևավորում, ինչը թույլ է տալիս գործել ոչ թե անմիջականորեն, այլ առաջնորդվելով հստակ գիտակցված նպատակներով, բարոյական նորմերով և արժեքներով;
- հարաբերականորեն կայուն վարքաձևերի ձևավորում
- երեխայի սոցիալական ուղղվածության զարգացում:

3.2. Բարոյագիտության և բարեկրթության սերմանումը կրտսեր դպրոցականների արժեհամակարգում

Արդեն իսկ կատարված տեսական ուսումնասիրությունների հիման վրա փաստենք, որ տարրական դասարաններում դպրոցականների բարոյագիտական և բարեկրթական դաստիարակումը հիմնվում է այն փաստի վրա, որ, մասնավորապես, արդի պայմաններում առանձնակի կարևորություն ունի բարոյապես հասուն, հասարակության նորմերին քաջատեղյակ և բարոյական առումով պատասխանատու անձանց «ուղարկումը» հասարակություն: Դասվարների խնդիրն է դասվարական ժամերին, առհասարակ ողջ ուսումնական գործընթացում առանձնապես կարևորել բարության, արդարության, հաղորդակցման հմտությունների արժեքը յուրաքանչյուրի կյանքում:

Դասվարական ժամերի ընթացքում զրույցները պետք է միտել սովորողների մոտ բարոյական կողմնորոշիչների ձևավորմանը, որոնք կհանգեցնեն ճիշտ հաղորդակցման, հարաբերությունների կառուցման, ինքնադաստիարակման և աշխարհայացքի ձևավորման:

Դասվարական ժամի կազմակերպման հարցում դասվարը պետք է հաշվի առնի, որ 1-4-րդ դասարաններում անցկացվելիք ժամերը պետք է լինեն միմյանց տրամաբանական շարունակությունը:

1-ին դասարանում ուսուցիչը սովորեցնում է երեխաներին իրավիճակներին բարոյագիտական գնահատական տալ: Ընդունել բարոյական կանոնները որպես արարքների կողմնորոշիչներ՝ իրավիճակ-վարքագիծ-կանոն շղթայով:

2-րդ դասարանում սովորողները հասնում են բարոյագիտական և բարեկրթական նորմերի ընդունման: Նրանց մոտ նկատվում է միտում հետևել այդ կանոններին: Ուսուցիչը փորձում է սովորողներին հասցնել նրան, որ վերջիններս սոցիալական վերահսկողությունից (ուսուցչի, ծնողների, հասակակիցների կողմնակի ներազդեցությունից) անցում կատարեն ինքնավերահսկողության: Սովորողների մոտ պետք է ձևավորվի այն մոտեցումը, որ նրանց արարքները բնորոշում են բարոյագիտական հասունությունը:

3-րդ դասարանում ուսուցիչը սովորողներին պետք է ծանոթացնի արարքի ներքին մղմանը՝ մոտիվին: Նա նրանց պետք է սովորեցնի, որ իրենց մղումների համար

պատասխանատու են հենց իրենք: 3-րդ դասարանի սովորողները պետք է ծանոթ լինեն մարդու անձնային որակներին, որոնք ձևավորվում են բարոյական նորմերի հենքով:

4-րդ դասարանում համակարգվում են վարքագծային մոտիվների վերաբերյալ գիտելիքները: Մեկնաբանվում են նորմաները որպես բարոյագիտական վարքագծի և անցանկալի գործողությունների կանխման միջոց:

Բարոյագիտական և բարեկրթական նորմերը տարրական դասարանների սովորողների արժեհամակարգում սերմանելու գործընթացում դրվում են հետևյալ խնդիրները՝

- բարոյագիտական իրավիճակը տեսնելու ունակության զարգացում,

- բարոյագիտական կանոնները որպես կողմնորոշիչ դիտարկելու ունակության զարգացում,

- բարոյական արարքների գնահատում:

Դասվարի կողմից ընտրվում են սովորողների հետ աշխատանքի տարբեր մեթոդներ՝

- անձնակողմնորոշված մոտեցման ներդրում, երբ նյութի բովանդակությունը արդիական է դառնում յուրաքանչյուր սովորողի համար,

- խթանող մոտեցման ներդրում, երբ երկխոսությունների միջոցով պահպանվում է երեխաների խոսքի ազատությունը, ինչն էլ իր հերթին թույլ է տալիս պահպանել թեմայի հանդեպ հետաքրքրությունը,

- զարգացնող մոտեցման ներդման միջոցով հասնել բարոյական գիտակցության ձևավորմանը և զարգացմանը,

- սովորողի ստեղծագործական ունակությունների ակտիվացում, հուզական ոլորտի հետ աշխատանք:

Դասվարը սովորողների հետ աշխատանքում պետք է ոչ միայն հիմնվի դպրոցում բարենպաստ միջավայրի պահպանման վրա, այլև երեխաների մեջ սերմանի այն գաղափարը, որ դպրոցն է հասարակական անձի ձևավորման հենքը: Եվ իրապես, դպրոցում, հատկապես դասվարից ստացած գիտելիքների, նրա անձնային որակներից բխող գիտակցումների վրա է հիմնված թե հետագայում սովորողն ինչ հարաբերություններ կձևավորի տարբեր անհատների հետ: Դասվարն է այն հիմնական օղակը, որով կապվում է սովորողը հասարակության այլ անդամների հետ՝ դրսևորելով

նրանց հանդեպ հոգատարության, բարության, հուզականության, ապրումակցման զգացումներ:

Ծանոթանալով բարության, աշխատանքի, կրթության, դաստիարակության սահմանումներին, լսելով դրանց վերաբերյալ ասացվածքներ՝ սովորողները գիտակցում են հիմնարար հումանիտար արժեքները, մարդկային հարաբերություններում դրանց ներդրման կարևորությունը, մարդկանց հանդեպ զգույշ և ուշադիր վերաբերմունքի դրսևորումը:

Այս ամենի արդյունքում սովորողները՝

- սովորողները կվերարտադրեն որոշակի կենսական իրավիճակներում կոնկրետ վարքագծային կանոնները,
- կգնահատեն սեփական վարքագիծը և շրջապատողների վարքագիծը ինչպես դասաժամի, այնպես էլ դասամիջոցների ընթացքում,
- կխոսեն հնարավորինս քաղաքավարի,
- կմասնակցեն երկխոսությունների, կկարողանան ազատ արտահայտել իրենց տեսակետը, կվերլուծեն զրուցակիցների արտահայտած կարծիքները, կկատարեն լրացումներ,
- կկարողանան արտահայտել իրենց կարծիքը ոչ դրական, ոչ բարոյական արարքների հետևանքների մասին,
- կկարողանան ներկայացնել բարոյագիտական և բարեկրթական համալիրում իրենց պատկերացրած հերոսի գեղագիտական պատկերը դրական և բացասական լույսի ներքո,
- կկարողանան ադեկվատ գնահատել ստեղծված իրավիճակը և կանխարգելել հնարավոր կոնֆլիկտը,
- կկարողանան գնահատել սեփական վարքագիծը դասերի և հերթապահությունների ընթացքում,
- կկարողանան հաղորդակցման ընթացքում խոսել բարեկամական տոնով,
- կկարողանան գնահատել հաղորդակցման բնույթը՝ տոն, ինտոնացիա, բառապաշար:

1-4-րդ դասարաններում սովորողների հետ ուսուցիչը պետք է խոսի դպրոցական վարվելակարգից, հաղորդակցման կանոններից, աշխատասիրությունից, արտաքին

տեսքի մշակույթից, արտադպրոցական վարվելակարգից: Այս ամենում շատ կարևոր է համագործակցությունը ծնողների հետ, որպեսզի նրանց միջոցով բարձրացվի դասվարի դերը և սովորողները կարողանան հստակ ընդունել և կիրառել նրա կողմից առաջադրվող կանոնները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, բարոյականությունը, վարվելակարգը և բարոյագիտությունը փոխկապված և մեկը մյուսին ենթադրող երևույթներ են: Բնական է, բարոյականությունն ավելի լայն հասկացություն է, որն ընդգրկում է նաև վարվելակարգը, իսկ այդ երկուսը միասին բարոյագիտության՝ հնագույն փիլիսոփայական գիտակարգերից մեկի ուսումնասիրության հիմնական առարկան, օբյեկտն են:

Զարգացող հասարակարգում չափազանց կարևոր է ունենալ բարոյագիտության և բարեկրթության նորմերին տիրապետող անհատներ: Այդ անհատները դաստիարակվում են դպրոցում: Բարոյագիտության և բարեկրթության նորմերի ներդրումը և ամրակայումը դպրոցում կարևոր է ինչպես ներդպրոցական, այնպես էլ արտադպրոցական միջավայրի ձևավորման գործում:

Ուսուցչի համար գոյություն ունեցող բոլոր բարոյագիտական և բարեկրթական նորմերը միտված են սովորողների արժեհամակարգում հասարակական անձի ձևավորմանը: Դրանց արդյունքը բարոյական պատկերացումները, գիտելիքները, համոզմունքները և սկզբունքներն են, որոնք հետագայում դրվում են հասարակական շփումների հիմքում:

Ուսուցիչը կարողանում է հասնել այդ ամենին մանկավարժական տակտի, բարոյագիտական և բարեկրթական նորմերի հիման վրա: Ուսուցիչը երբեք չպետք է մոռանա, որ ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման առանցքը մանկավարժական տակտն է, վարպետությունը և հեղինակությունը: Նա մշտապես պետք է զբաղվի իր պատրաստականության բարձրացմամբ:

Դասվարի կլանվածությունը իր գործով, նրա բարյացակամ և արդարացի վերաբերմունքը դասարանի յուրաքանչյուր աշակերտի հետ, նրա հոգատարությունը և մտահոգությունը համադասարանցիների միջև հարաբերություններ ստեղծելու մասին ամրապնդում են ուսուցչի հեղինակությունը, առաջացնում և ամրապնդում են իր նկատմամբ (բնականաբար նաև իր դասավանդած առարկայի նկատմամբ) աշակերտների սերն ու հարգանքը: Դասվարը պետք է կարողանա դասերը կազմակերպել նրանց տարիքային առանձնահատկություններին համապատասխան և կարողանա ստեղծել այնպիսի պայմաններ, որ աշակերտները պատշաճ ձևով դրսևորեն իրենց ակտիվությունն ու ծախսեն իրենց էներգիան, ձգտեն ինքնուրույն դատողությունների և ընդհանրացումների:

Կրտսեր դպրոցական տարիքը ընդգրկում է 6-7 ից մինչև 10-11 տարեկանը, որը համընկնում է հանրակրթության դպրոցի I-IV դասարանների հետ: Այս տարիքի կենսաբանական զարգացումը և տարիների փորձը ցույց է տվել, որ 6-7 տարեկան երեխաները իրենց ֆիզիկական ու հոգեկան զարգացման մակարդակով հիմնականում պատրաստ են դպրոցական ուսուցման: Սակայն նրանք դեռ չեն համարվում հասարակական անձ, քանի որ չեն կրում բարոյագիտական, բարեկրթական անհրաժեշտ նորմեր, և այդ նորմերը ձևավորելու պարտականությունը դասվարի ուսերին է:

Հիմք ընդունելով աշխատանքում կատարված տեսական ուսումնասիրությունները՝ առաջարկում ենք՝

- ուսուցիչ-ծնող համագործակցության շնորհիվ երեխաների մոտ ձևավորել ուսուցչի կերպարի և դերի մասին առավել վառ պատկերացումներ, որպեսզի ձևավորված հեղինակության միջոցով ուսուցչի խոսքն էլ ավելի հասանելի և ընդունելի դառնա սովորողների համար,
- դպրոցներում հնարավորություն ստեղծել դիտել ֆիլմեր, մասնավորապես, մարզերում գտնվող դպրոցներում, որտեղ տեղեկատվական տեխնոլոգիաները նվազ հասանելի են: Կան բազմաթիվ ֆիլմեր բարոյագիտական, բարեկրթական մոտիվներով, որոնք թույլ կտան ուսուչի կողմից հաղորդվածը էլ ավելի ընկալելի դարձնել տեսալսողական միջոցների ներգրավման արդյունքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Շաղինյան Լ. «Բարոյական դաստիարակություն» հասկացության վերլուծությունը դաստիարակության արդի հայեցակարգերի համատեքստում: Երևան, ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, 2008 / 1 – 2, էջ 82-83:
2. Бочарова О. Учитель как субъект педагогического общения. — Кемерово, 1994. — 66 с.
3. Валеева З. Р. Облики современной морали: вернуть утерянное доверие к морали // Проблемы социокультурного бытия и идея диалога: глобальное, национальное, духовное измерения. Уфа, 2009. с. 90.
4. Введение в педагогическую деятельность: Учеб. пособие для студ. высш. Учеб. заведений / А.С. Роботова, Т.В. Леонтьева, И.Г. Шапошникова и др. - М.: Изд. центр «Академия», 2000. - с. 105 - 109.
5. Гидденс Э. Последствия современности / Э. Гидденс; пер. с англ. Г. К. Ольховикова, Д. А. Кибальчич; вступ. статья Т. А. Дмитриева. – М.: Издательская и консалтинговая группа «Праксис», 2011., с.56.
6. Горбунова Н. В., Игнатова О. И. Особенности личностного и профессионального развития учителей начальных классов в профессиональной деятельности. Научно-теоретический журнал 15 Выпуск 2 (39) 2019., с. 17.
7. Люблинская А. А. Учителю о психологии младшего школьника / А. А. Люблинская. – М. : Просвещение, 2017., с.51.
8. Немов Р.С. Психология. Учебн. Для студентов высших пед. Учеб. Заведений. В 3 кн. Кн. 1. Общие основы психологии. 2-е изд. М.: Просвещение: ВЛАДОС, 1995, 576 с.
9. «Педагогическая практика в начальной школе» (Под ред. Г.М. Коджаспировой, Л.В. Борисовой - М., 2008., с. 12-16.
10. Роджерс К. Р., Могу ли я быть фасилитатором в группе, 1995, с. 71.
11. Сластенин В.А. и др. Педагогика: Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений / В. А. Сластенин, И. Ф. Исаев, Е. Н. Шиянов; Под ред. В.А. Сластенина. - М.: Издательский центр "Академия", 2002., с. 206.

12. Стреха Е.А. Ж.-Ж. Руссо о роли природы в воспитании детей/ Е.А. Стреха// Начальная школа. - 2008. - № 5. - С. 20-22.
13. Учителю о педагогической технике. Под ред. Л.И. Рувинского. - М., Педагогика, 1987 г. - с. 87-99.
14. Юлдыбаев Б. Р. Мораль как социокультурный феномен: сущность и специфика // Вестник Башкирского университета. 2007. Т. 12. №4. с. 140.
15. Яхьяева А. Х. Младший школьный возраст: психолого-педагогические условия развития интеллектуальных способностей: Вестник ЧГПУ им. И.Я.Яковлева., 2018., N4 (100)., с. 308.